


Հաստատված է  
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական  
խորհրդի 2016թ. նոյեմբերի 24-ի N2-11/16/2 որոշմամբ:  
Փոփոխությունները կատարվել են գիտական խորհրդի  
2017թ. հունվարի 31-ի N1-01/17/1 2017թ. օգոստոսի 31-ի  
N1-08/17/3, 2017թ. սեպտեմբերի 15-ի N1-09/17/1,  
2017թ.-ի հոկտեմբերի 17-ի N1-10/17/1,  
2017թ.-ի հոկտեմբերի 27-ի N2-10/17/3,  
2018թ.-ի հուլիսի 2-ի N1-07/18/4, 2018թ.-ի  
օգոստոսի 31-ի N1-08/18/1, 2019թ.-ի  
օգոստոսի 23-ի N1-07/18/4 որոշումներով:  
Գիտական խորհրդի նախագահ՝



Հ. Վ. Թոքմաջյան

**ԿԱՐԳ**

**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու մասին**

- |           |               |             |           |             |
|-----------|---------------|-------------|-----------|-------------|
| 1. Շուշիի | տեխնոլոգիական | համալսարանի | (այսուհետ | Համալսարան) |
|-----------|---------------|-------------|-----------|-------------|
- պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանվում է 13 տարակարգ.
- 1.1 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
  - 1.2 գիտությունների դոկտոր, դոցենտ.
  - 1.3 գիտությունների դոկտոր, ավագ դասախոս.
  - 1.4 գիտությունների դոկտոր, ասիստենտ.
  - 1.5 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր.
  - 1.6 գիտությունների թեկնածու, դոցենտ.
  - 1.7 գիտությունների թեկնածու, ավագ դասախոս.
  - 1.8 գիտությունների թեկնածու, ասիստենտ.
  - 1.9 պրոֆեսոր.
  - 1.10 դոցենտ.
  - 1.11 ավագ դասախոս.
  - 1.12 ասիստենտ.
  - 1.13 դասախոս:
2. Ըստ տարակարգերի ամսական աշխատավարձի տեսակարար ցուցանիշները սահմանում է Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը:
3. Դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 1-ին տարակարգ:
4. Դոկտորի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 2-րդ տարակարգ:
5. Դոկտորի գիտական աստիճան ունեցող, սակայն գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 3-րդ կամ 4-րդ տարակարգ՝ կախված ուսումնական կամ գիտական գործունեության ցուցանիշներից: Գիտական կամ գիտամանկավարժական գործունեության 3 տարվա ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 5 աշխատանք, այդ թվում՝ գյուտի արտոնագրեր, միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցումներ (ազրարային գիտությունների համար՝ 3 աշխատանք, ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում՝ 5 աշխատանք կամ 5 կառույցի նախագիծ (հեղինակ կամ համահեղինակ), կամ հանրապետական կամ միջազգային մրցույթների մրցանակ, սպորտի բնագավառում՝ 3 աշխատանք կամ ՀՀ կամ այլ երկրների պատվավոր կոչում կամ հանրապետական միջազգային մրցումների մրցանակ կամ պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, նկարչության ոլորտում ՀՀ, ԱՀ կամ այլ երկրների պատվավոր կոչում կամ

տպագրված 3 արթում կամ գիտական և (կամ) ուսումնամեթոդական 3 աշխատանք (բոլորը միասին Տպագիր աշխատանք) ունեցող անձին շնորհվում է 3-րդ տարակարգ, իսկ չունեցողին՝ 4-րդ (Փոփ. 31.01.2017թ. N1-01/17/1, 31.08.2017թ. N1-08/17/3, 15.09.2017թ. N1-09/17/1):

6. Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 5-րդ տարակարգ:

7. Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 6-րդ տարակարգ:

8. Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող, սակայն գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 7-րդ կամ 8-րդ տարակարգ՝ կախված ուսումնական կամ գիտական գործունեության ցուցանիշներից: Գիտական կամ գիտամանկավարժական գործունեության 3 տարվա ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 4 աշխատանք, այդ թվում՝ գյուտի արտոնագրեր, միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցումներ (ագրարային գիտությունների համար՝ 2 աշխատանք, ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում՝ 4 աշխատանք կամ 4 կառույցի նախագիծ (հեղինակ կամ համահեղինակ), կամ հանրապետական կամ միջազգային մրցույթների մրցանակ, սպորտի բնագավառում՝ 2 աշխատանք, կամ ՀՀ կամ այլ երկրների պատվավոր կոչում կամ հանրապետական միջազգային մրցումների մրցանակ կամ պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, նկարչության ոլորտում ՀՀ, ԱՀ և այլ երկրների պատվավոր կոչում կամ տպագրված 2 արթում կամ գիտական և (կամ) ուսումնամեթոդական 2 աշխատանք) ունեցող անձին շնորհվում է 7-րդ տարակարգ, իսկ չունեցողին՝ 8-րդ (Փոփ. 31.01.2017թ. N1-01/17/1, 31.08.2017թ. N1-08/17/3, 15.09.2017թ. N1-09/17/1):

9. Գիտական աստիճան չունեցող, սակայն պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 9-րդ տարակարգ:

10. Գիտական աստիճան չունեցող, սակայն դոցենտի գիտական կոչում ունեցող անձին շնորհվում է 10-րդ տարակարգ:

11. Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա շնորհվում է 11-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 5 աշխատանք, այդ թվում՝ գյուտի արտոնագրեր, միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցումներ (ագրարային գիտությունների համար՝ 2 աշխատանք, ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում՝ 5 աշխատանք կամ 5 կառույցի նախագիծ (հեղինակ կամ համահեղինակ), կամ հանրապետական կամ միջազգային մրցույթների մրցանակ, սպորտի բնագավառում՝ 2 աշխատանք կամ ՀՀ կամ այլ երկրների պատվավոր կոչում կամ հանրապետական միջազգային մրցումների մրցանակ կամ պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, նկարչության ոլորտում ՀՀ, ԱՀ և այլ երկրների պատվավոր կոչում կամ տպագրված 2 արթում կամ գիտական և (կամ) ուսումնամեթոդական 2 աշխատանք), հանձնել է թեկնածուական մասնագիտական քննություն կամ ունի գիտական կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն 10 տարվա ստաժ (Փոփ. 31.01.2017թ. N1-01/17/1, 31.08.2017թ. N1-08/17/3, 15.09.2017թ. N1-09/17/1, 23.08.2019թ. N1-07/18/4):

12. Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 12-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, վերջին 5 տարիների ընթացքում տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 2 աշխատանք, այդ թվում՝ գյուտի արտոնագրեր, միջազգային գիտաժողովներում տպագրված զեկուցումներ (այդ թվում՝ ագրարային գիտությունների համար՝ 1 աշխատանք, ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում՝ 2 աշխատանք կամ 2 կառույցի

նախագիծ (հեղինակ կամ համահեղինակ), կամ հանրապետական կամ միջազգային մրցույթների մրցանակ, սպորտի բնագավառում՝ 1 աշխատանք կամ ՀՀ կամ այլ երկրների պատվավոր կոչում կամ հանրապետական միջազգային մրցումների մրցանակ կամ պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, նկարչության ոլորտում ՀՀ, ԱՀ և այլ երկրների պատվավոր կոչում կամ տպագրված 1 ալբոմ կամ գիտական և (կամ) ուսումնամեթոդական 1 աշխատանք), հանձնել է թեկնածուական մասնագիտական քննություն կամ ունի գիտական կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն 3 տարվա ստաժ (Փոփ. 31.01.2017թ. N1-01/17/1, 31.08.2017թ. N1-08/17/3, 15.09.2017թ. N1-09/17/1):

13. Գիտական աստիճան և գիտական կոչում չունեցող անձին շնորհվում է 13-րդ տարակարգ, եթե նա ունի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում:

13'. Ներկայացվող հոդվածները պետք է տպագրված լինեն ՀՀ ԲՈՀ-ի կողմից ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակություններում, բարձր տեխնոլոգիաների տեղեկագրում կամ արտերկրում հրատարակված գիտական հանդեսներում (Փոփ. 2.07.2018թ. N1-07/18/4): Ներկայացվող Տպագիր աշխատանքները, տարակարգերի սահմանման համար որպես հիմք, ուժի մեջ են մտնում ամբիոնի սեմինարում զեկուցելուց և դրական կարծիք ստանալու պահից: Համալսարանը ընտրողական կարգով իրականացնում է տպագրված աշխատանքներում ներկայացված նյութի ստուգում գրագողությունը բացառելու նպատակով: Գրագողության դեպք բացահայտելու դեպքում անհապաղ գործընթաց է սկսվում դասախոսի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար (Փոփ. 31.08.2018թ. N1-08/18/1): Յուրաքանչյուրը (մինչև 2019-2020 ուստարին), որպես տպագրված, կարող է ներկայացնել տպագրության մեջ գտնվող մեկ աշխատանքի մասին տեղեկանք, եթե հայտնի է տպագրման հանդեպը, հրատարակման համարը և փամկետը (Փոփ.15.09.2017թ. N1-09/17/1, 2.07.2018թ. N1-07/18/4):

13". Լեզուների բնագավառում որպես տպագրված աշխատանք համարվում են նաև ոչ պակաս քան 2 տպագիր մամուլ ծավալով լիազոր մարմնի կամ բուհի գիտխորհրդի կողմից երաշխավորված և հրատարակված թարգմանությունները (Փոփ.15.09.2017թ. N1-09/17/1):

13"". 2019-2020 ուստարվանից 1.1-ից 1.6 տարակարգեր ունեցող անձանց աշխատանքային պայմանագրերը կարող են լուծվել, եթե վերջին 5 տարիների ընթացքում չունեն տպագրված գիտական և (կամ) ուսումնամեթոդական անհրաժեշտ քանակությամբ աշխատանքներ (Փոփ. 2.07.2018թ. N1-07/18/4 ):

13""'. Տարակարգերը շնորհվում են ռեկտորի հրամանով՝ ամբիոնի առաջադրմամբ և ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ, բացի սույն կարգի 11-րդ կետով սահմանված դեպքի (երբ տարակարգը շնորհվում է ռեկտորի հրամանով՝ գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա) (Փոփ.17.10.2017թ. N1-10/17/1, 23.08.2019թ. N1-07/18/4):

13""". Սկսած 2018-2019 ուստարվանից տարակարգերը հաստատվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մեկ անգամ՝ մինչև սեպտեմբերի 15-ը (Փոփ.27.10.2017թ. N1-10/17/3):

14. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2017թ.-ի փետրվարի 1-ից:

Գիտխորհրդի նախագահ՝

Գիտական քարտուղար՝



Հ.Թորմաջյան

Ա.Առաքելյան